# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Իմմունոֆարմ ՍՊԸ-ն ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | մակնիշը | տեխնիկական բնութագիրը |
| 12 | Thermo Fisher Genesys/ Kern ADJ200-4/ Boyn industrial DON-G030/ Adrona Ro system/Boyn imdustrial Filtration unit SF1/Scitek Magnetic Stirrer /Scitek pH meter | Thermo Fisher Genesys/ Kern ADJ200-4/ Boyn industrial DON-G030/ Adrona Ro system/Boyn imdustrial Filtration unit SF1/Scitek Magnetic Stirrer /Scitek pH meter | Սպեկտրոմետրի սպեկտրալ տիրույթը՝ ոչ նեղ քան 325-1100 նմ, երկճառագայթային, սկանավորման արագությունը՝ մինչև 1800 նմ/րոպե, ալիքի երկարության ճշգրտությունը 541,9 նմ դեպքում՝ ±0.5 նմ, ալիքի երկարության վերարտադրելիությունը 541,9 նմ դեպքում՝ ≤0.2 նմ, սպեկտրալ տարրալուծումը՝ 2.3-2.5նմ, սպեկտրալ ճեղքի լայնությունը՝ փոփոխական 1-2 նմ, ֆոտոմետրիկ տիրույթը >3,5 A, ֆոտոմետրիկ ճշտությունը 1A: ± 0.004A, ֆոտոմետրիկ կրկնելիությունը ± 0.0002A, Վոլֆրամ հալոգենային լամպ (երաշխիք 3տարի): Տվյալների ինտերվալ 5 / 2 / 1.0 / 0.5 / 0.2 նմ: Աղմուկը ոչ ավել 0.00020A... Առնվազն 17 սմ լայնությամբ հեղուկ բյուրեղային (հպումային) էկրան, ճառագայթի ավտոմատ կարգաբերմամբ: Սարքը թույլ պետք է տա չափումներ կատարել մի շարք ռեժիմներով՝ կլանում, %, Kubelka-Munk, log(1/R), log(Abs Intensity, Abs: Սարքը պետք է հագեցած լինի երկու սիլիկոնային ֆոտոդիոդ դետեկտորներով: Սարքը պետք է լինի նոր, չօգտագործված, ունենա առնվազն մեկ տարվա արտադրողի երաշխիք: Պետք է տրամադրվի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ծրագրային ապահովում՝ օգտատերերի կառավարմամբ: Իրականացվի մեթոդաբանության ուսուցում երկաթի, մանգանի տարբեր մատրիքսներում պարունակության որոշման համար, ինչպես նաև ծրագրային ուսուցում: Բարձր ճշգրտության անալիտիկ կշեռք ՝ նախատեսված լաբորատոր չափումների համար և արտադրված Եվրոպական միության տարածքում: Սարքը պետք է ունենա էրգոնոմիկ մեխանիկական դիզայն, մետաղական կորպուս, կարգավորվող ոտքեր և մեխանիկական համահարթեցման համակարգ՝ ներկառուցված պղպջակային մակարդակով: Կարգաբերման համակարգը պետք է լինի ներքին ավտոմատ՝ ապահովելով չափումների կայունությունը շրջակա միջավայրի ջերմաստիճանի փոփոխությունների դեպքում: Սարքը պետք է համապատասխանի օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության OIML R76 պահանջներին և դասվի առաջին չափագիտական դասին: Կշեռքի առավելագույն ծանրաբեռնվածությունը պետք է լինի 220 գ, իսկ կշռման նվազագույն ծանրաբեռնվածությունը՝ ոչ ավելի քան 1 մգ: Կշռման կարդացվող արժեքը պետք է լինի 0.1 մգ, սանդղակի ստուգման միջակայքը՝ 1 մգ: Կրկնելիության ստանդարտ շեղումը պետք է լինի ոչ ավելի քան 0.1 մգ, իսկ գծայինությունը՝ ոչ ավելի քան ±0.2 մգ ամբողջ չափման միջակայքում: Կշռման կայունացման ժամանակը պետք է չգերազանցի 2 վայրկյանը: Նվազագույն կշիռը ըստ USP պահանջների պետք է լինի ոչ ավելի քան 10 մգ: Սարքը պետք է հագեցած լինի լիարժեք ապակյա պաշտպանիչ կշռման խցիկով՝ քամուց և արտաքին ազդեցություններից պաշտպանված ճշգրիտ չափումներ ապահովելու նպատակով: Կշռման սկուտեղը պետք է լինի շրջանաձև՝ Ø90 մմ տրամագծով և պատրաստված չժանգոտվող պողպատից: Սարքը պետք է ունենա լուսավորվող LCD էկրան, որը թույլ է տալիս հստակ ընթերցում տարբեր լուսավորության պայմաններում: Հաղորդակցման հնարավորությունները պետք է ներառեն պարտադիր RS232 և USB ինտերֆեյսներ՝ տվյալների փոխանցման և լաբորատոր տեղեկատվական համակարգերի հետ ինտեգրման համար: Սարքը պետք է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | աշխատի 100–240 Վ փոփոխական լարումով 50/60 Հց հաճախականությամբ և ունենա 12 Վ հաստատուն հոսանքի սնուցում: Սարքի առավելագույն էներգասպառումը պետք է չգերազանցի 5 Վտ: Աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը պետք է լինի +10-ից +40 °C: Սարքի քաշը պետք է լինի մոտ 7 կգ՝ ապահովելով մեխանիկական կայունություն աշխատանքի ընթացքում: Սարքի ստանդարտ հավաքածուն պետք է ներառի անալիտիկ կշեռք, Ø90 մմ կշռման սկուտեղ, ապակյա պաշտպանիչ խցիկ, կենտրոնացման օղակ, սնուցման աղբյուր, փոշուց պաշտպանող պատյան և արտադրողի պաշտոնական շահագործման ձեռնարկ: Սարքը պետք է լինի նոր, չօգտագործված, ունենա առնվազն մեկ տարվա արտադրողի երաշխիք: Լաբորատոր չորացման վառարանը պետք է ունենա մետաղական արտաքին կորպուս՝ ջերմամեկուսացված կառուցվածքով և չժանգոտվող պողպատից պատրաստված ներքին խցիկ: Օգտակար ծավալը պետք է լինի 30 լիտր: Ջերմաստիճանի կարգավորման միջակայքը պետք է լինի առնվազն շրջակա միջավայրի ջերմաստիճանից մինչև 250 °C: Ջերմաստիճանի կառավարումը պետք է իրականացվի թվային PID կարգավորիչի միջոցով՝ ապահովելով բարձր կայունություն և հավասարաչափ ջերմաբաշխում խցիկի ամբողջ ծավալում: Ջերմաստիճանի կարգավորման ճշգրտությունը պետք է լինի ոչ վատ, քան ±1 °C, իսկ ջերմաստիճանի համաչափությունը խցիկի ներսում՝ ±2.5 %: Վառարանը պետք է ունենա բնական կամ հարկադիր օդափոխության համակարգ՝ օդի հավասար շրջանառության համար: Սարքը պետք է հագեցած լինի թվային LED կամ LCD էկրանով՝ իրական ջերմաստիճանի և սահմանված արժեքի միաժամանակյա ցուցադրմամբ: Ժամանակաչափը պետք է լինի ներկառուցված՝ առնվազն 0-ից 999 րոպե կարգավորման հնարավորությամբ: Սարքը պետք է աշխատի 220–240 Վ փոփոխական լարումով 50/60 Հց հաճախականությամբ: Մաքսիմում հզորությունը պետք է չգերազանցի 800 Վտ: Վառարանը պետք է ունենա գերտաքացումից պաշտպանող անվտանգության համակարգ և ավտոմատ անջատման |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ֆունկցիա։ Դուռը պետք է լինի ջերմամեկուսացված, հերմետիկ փակվող, ապահովված ջերմակայուն սիլիկոնե խցանմամբ։ Սարքի աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը շրջակա միջավայրի համար պետք է լինի +5-ից +40 °C։ Ներքին խցիկը պետք է թույլ տա միաժամանակ տեղադրել առնվազն երկու կարգավորվող դարակ։ Սարքի ընդհանուր չափերը և քաշը պետք է ապահովեն սեղանային տեղադրում և մեխանիկական կայունություն լաբորատոր պայմաններում։ Սարքի ստանդարտ հավաքածուն պետք է ներառի լաբորատոր չորացման վառարան առնվազն երկու չժանգոտվող պողպատից դարակ, սնուցման լար և արտադրողի պաշտոնական շահագործման ձեռնարկ։ Սարքը պետք է լինի նոր, չօգտագործված, ունենա առնվազն մեկ տարվա երաշխիք։ Լաբորատոր ջրի մաքրման համակարգ՝ նախատեսված խմելու ջրից հակադարձ օսմոսի տեխնոլոգիայով մաքրված ջրի արտադրության համար։ Սարքը պետք է ունենա կոմպակտ կառուցվածք և հնարավորություն տա տեղադրման ինչպես լաբորատոր սեղանի վրա, այնպես էլ պատին ամրացմամբ։ Մուտքային ջուրը պետք է լինի խմելու ջուր, իսկ մուտքային ջրի աշխատանքային ճնշումը պետք է լինի 0.4–4.0 bar միջակայքում։ Մուտքային ջրի ջերմաստիճանը պետք է լինի 5–35 °C, իսկ մուտքային ջրի էլեկտրահաղորդունակությունը չպետք է գերազանցի 1500 µS/cm։ Սարքը պետք է ապահովի լուծված աղերի հեռացման արդյունավետություն առնվազն 97 %։ Սարքի արտադրողականությունը պետք է լինի առնվազն 8–10 լ/ժ մաքուր ջրի արտադրություն՝ կախված մուտքային ջրի պայմաններից և կոնֆիգուրացիայից։ Համակարգը պետք է ապահովի կայուն և շարունակական աշխատանք լաբորատոր պայմաններում և հնարավորություն տա միացման արտաքին պահեստային տանկերի հետ՝ առնվազն 8 լ-ից մինչև 300 լ/ժ ծավալով։ Սարքը պետք է ունենա թվային ցուցադրիչ՝ համակարգի աշխատանքի վիճակի և հիմնական պարամետրերի վերահսկման համար։ Կառավարման համակարգը պետք է ապահովի ավտոմատ աշխատանք, պաշտպանություն գերճնշումից և չոր |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ИММУНОФАРМ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԱՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | марка | технические характеристики |
| 12 | | | աշխատանքի կանխարգելում: Համակարգը պետք է աշխատի 100–240 V փոփոխական լարումով 50/60 Hz հաճախականությամբ: Սարքի ստանդարտ հավաքածուն պետք է ներառի լաբորատոր ռեվերս օսմոսի ջրի մաքրման համակարգ, անհրաժեշտ ֆիլտրային տարրեր, սնուցման լար, մուտքային և ելքային միացման տարրեր և արտադրողի պաշտոնական շահագործման ձեռնարկ: Սարքը պետք է լինի նոր, չօգտագործված, ունենա առնվազն մեկ տարվա արտադրողի երաշխիք և համապատասխանի արտադրողի տեխնիկական փաստաթղթերին: Վակումային ֆիլտրացիոն համակարգ իր վակուում պոմպով որը պետք է ներառի ֆիլտրացիոն հավաքածու, որը բաղկացած է 300 մլ լցակայող ֆիլտրի բազա, 1000 մլ թափոնային տարրա, PTFE դիսկ ֆիլտր (0.2 μm), մեկ մետր երկարությամբ սիլիկոնային խողովակ և համապատասխան ֆիտինգներ բանկաների միացման համար: Ֆիլտրի արդյունավետ մակերեսը պետք է լինի մոտ 9.6 cm², ինչն ապահովում է ստանդարտ լաբորատոր ֆիլտրացիա փոքր և միջին ծավալի հեղուկների համար: Վակուումային պոմպը պետք է աշխատի 220 V AC, 50 Hz փոփոխական լարման պայմաններում, 60 Վտ բարձր արդյունավետությամբ (մոտ 1/8 HP), ապահովելով մաքուր օդի հոսք մինչև 20 լ/րոպ (20 L/min)՝ կախված աշխատանքային պայմաններից: Մաքսիմալ ստեղծվող վակուումը պետք է կազմի մոտ 670 mmHg (≈89.3 kPa / ≈893 mbar)՝ բավարար գերճնշում ապահովելու համար վակուումային ֆիլտրացիա-ապրատների համար: Մագնիսական խառնիչներ 2 հատ ջերմաստիճանային կարգավորմամբ, պտույտների արագությունը առնվազն 1500 պտ.րոպե: Հեղուկ բյուրեղային էկրանով: Առավելագույն ջերմաստիճանը 380 °C: Կերամիկական ծածկույթով: Չափսերը ոչ ավել 14սմX14սմX8սմ: Հեղուկի բեռնվածությունը ոչ ավել 3L : Ջերմային տվիչի միացման հնարավորություն: Երաշխիք 1 տարի: Բազմաֆունկցիոնալ pH չափիչ pH/EC/TDS Չափման տիրույթը առնվազն՝ 0,00...14,00 (0,1 - 0,01 pH), ±1000mV (1 mV), ջերմաստիճան՝ 0...100,0 °C (0,1 °C): Էլեկտրոդի պահման ստենդ, գունավոր էկրան, pH-ի ավտոմատ և մեխանիկական ստուգաչափում, ներառյալ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ստանդարտ բուֆերային լուծույթներ (2 կետերի(4.01, 7.01) համար յուրաքանչյուրից 100 մլ,), 3 Մ կալիումի քլորիդի լուծույթ (100 մլ)։ էլեկտրոդ՝ ջերմաստիճանի սենսորով, բուֆերային լուծույթներ pH-ի չափման համար: Անվտանգության պարագաներ Լաբորատոր սարքավորումների լրակազմը պետք է ներառի սարքավորումների անվտանգ գործածության իրահանգներում նշված անհատական պաշտպանիչ միջոցներ և պարագաներ, այդ թվում քիմիական հրդեհների մարման կրակմարիչներ 3 հատ (Տեսակ՝ փոշիային կամ $CO_2$, քիմիական հրդեհների համար, Կրակի դասեր՝ A/B/C, Ծավալը՝ առնվազն 5 կգ (կամ 5 լ), Արտադրության տարեթիվ՝ ոչ ավելի քան 12 ամիս, նոր, չօգտագործված), պաշտանիչ ակնոցներ 3 հատ, նիկրիլային ձեռնոցներ, պաշտպանիչ արտահագուստ 3 հատ, լսողության պաշտպանության խցաններ 1 տուփ, դիմակներ 1 տուփ և առաջին օգնության արկղիկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված առաջին օգնության դեղամիջոցներով: Ապրանքի տեղադրումը, կարգաբերումը և փորձարկում իրականացվում է մատակարարի կողմից: Երաշխիքային ժամկետ՝ մեկ տարի |